

ՎԱԶԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆ



ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ

ՀՐԱՄԱՆԱԻ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱԶԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ

ՎԱԶԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՎԱՐԴԱՊԵՏ ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

«Աստվածամոր մասին ձեր աշխատությունը կարդացի. շնորհավորում եմ ձեռնարկման ոգու համար: Շատ լավ գիտական ոգով եք մոտեցել հարցերին: Ձեզ հաջողություն եմ մաղթում»:

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՅԱՆ
Մարտի, 21 հոկտեմբերի, 1976

Սիրելի՛ Հայր Վաչե,
Ուրախ եղա՝ ստանալով «Աստվածամայրը» վերնագրյալ գրքույկդ: Գովելի է աշխատասիրությունդ: Կհուսամ, որ շարունակելու ես աշխատել և այլ գրքեր ևս արտադրել:

Աղոթակից՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ
Նյու-Յորք, 14 մարտի, 1977

Մեզ հոգևոր ուրախություն է պատճառում այն ծարավը, որ ունեն Հայաստանի մեր հարազատ քույրերն ու եղբայրներն Աստծո խոսքի հանդեպ, այն լսելու և կարդալու, Աստծո շնչով՝ Աստվածաշնչով ներշնչվելու, առօրյա հոգսաշատ կյանքի մեջ իմաստ և արժեք տեսնելու և գտնելու նրանց բնական, ներքին ու անբռնազբոս մղումը:

Ժամանակակից աշխարհը, չնայած իր հսկայաքայլ առաջընթացին և գրեթե բոլոր բնագավառներում՝ արդյունաբերության, գիտության, արվեստի և գրականության, անգամ տիեզերքի գաղտնիքները բացահայտելու գործում ունեցած վիթխարի նվաճումներին, շատ հեռու է մարդ արարածի հոգին ըմբռնելուց և նրա հոգևոր կարիքները բավարարելուց:

Հոգին ուրիշ տեսակ սննդի է կարոտ:

Հայաստանյայց Առաքելական ուղղափառ Եկեղեցին, որպես Թաղեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզությանը Հայաստան աշխարհում տնկված ու Սուրբ Գրիգոր Լուսավորչի և նրա զավակների մշակությամբ աճած խոր արմատներ ունեցող մի ծառ, խարսխված է Քրիստոսի անձի և Ավետարանի կենսատու հողի վրա: Այն Քրիստոսի հավատով իրար միացած և մեկ ընտանիք կազմած հայերի, հայաստանցիների դաստիարակն է և նրանց ստեղծագործ ոգու ծնողը, աղբյուրը՝ հոգևոր շնորհների: Բանաստեղծ Վահան Թեքեյանի խոսքերով՝

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգվույս...

Այսօրվա աղետահար Հայաստանի հողից ծլած, հայ ժողովրդի պատմության ընդերքից բխած շարժումը՝ «հոգու պտուղներ տալու» և «դեպի աղբյուրը լույսի վերադառնա-

լու», Աստծո շնորհած օրհնությունն է ներկա ժամանակների համար: Գիշտ այնպես, ինչպես Աստվածամայր Կույս Մարիամն օրհնություն եղավ մարդկության համար՝ հնազանդվելով Տիրոջ կամքին:

Աստվածամորը վերաբերող զանազան հարցերի համարամատչելի պատասխանները կգտնեք Վաչե Ժայրագույն վարդապետ Իգնատիոսյանի «Աստվածամայրը» գրքում:

Հովվական մտահոգությամբ, պարզ ոճով գրված այս էջերը Հայաստանյայց Եկեղեցու զավակների հոգևոր դաստիարակության համար օգտակար բազմաթիվ բացատրություններ են պարունակում: Դրանք նաև անհրաժեշտ ու բավարար են տգետների և աղանդավորների առարկություններին պատասխանելու համար:

Մեր ուրախությունը բազմապատկվում է, որ Հայաստանի մեր քույրերն ու եղբայրները մտադիր են վերահրատարակել այս գիրքը հոգևոր քաղցը գոհացնելու նպատակով:

Մաղթում ենք, որ առատանա Աստծո օրհնությունն այն հոգիների մեջ, որոնք հաղորդ են իրենց հայրերի հավատին:

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղեմի
Երուսաղեմ, 13 սեպտեմբերի, 1991

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս աշխատությամբ փորձել են լուսաբանել Սուրբ Գրքին առնչվող մի շարք հարցեր, որոնք մշտապես բանավեճերի նյութ են հանդիսանում որոշ եկեղեցիների համար: Դրանցից են, օրինակ, Աստվածածնի մշտնջենական կուսության վարդապետությունը, Վերափոխման տոնը, Հիսուսի «եղբայրների» հարցը և այլն:

Մեր Եկեղեցու հավատացյալ զավակներից ոմանք ավելի շատ «հոգևոր սնունդ» ստանալու մտադրությամբ կամ «Աստծո Խոսքը» լսելու համար երբեմն հաճախում են զանազան եկեղեցիներ կամ կարդում նրանց ամսագրերը և այդ «սննդի» հետ այլ օտար տեսություններ են կլանում, որոնք մարսել չկարողանալով, սկսում են թերահավատորեն վերաբերվել մեր Եկեղեցու վարդապետությանը:

Այս գրքույկով փորձել են գոնե մասամբ մեկնաբանել մեր Եկեղեցու վարդապետությունը և, փաստերը միայն Աստվածաշնչից վերցնելով, ապացուցել, թե ինչպես որ մեր Եկեղեցին է հաստատված առաքելական հիմքի վրա, այնպես էլ բացարձակապես սուրբգրային են նրա բոլոր տոնակատարությունները և հավատալիքները:

Ոչ մի մեջբերում չեն արել Եկեղեցու սուրբ հայրերի ներբողական գործերից, որովհետև դրանք այլ եկեղեցիների անդամների կողմից համոզիչ փաստարկներ չէին համարվելու: Մեր Եկեղեցու վարդապետությունը, ինչպես ասացի, հիմնված է Աստվածաշնչի հավատի Վեմի վրա, հետևապես կարող ենք կրկնել մեր Փրկչի Լեռան Քարոզի եզրակացությունը.

«Անձրևները եկան և գետերը հորդեցին, հովերը փչեցին և խփեցին այն տանը, և չկործանվեց, քանի որ ժայռի վրա էր հաստատված» (Մատթեոս 7.25):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ

ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԳԵՐԱԶԱՆՑ ՅԱՎԱՏԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ
«Այսուհետև բոլոր ազգերն ինձ երանի պիտի տան»
Ղուկաս 1.48

Օգոստոսի 15-ին կամ մոտակա կիրակի օրը՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնին, համայն քրիստոնյա աշխարհն օրհնում է Աստվածամորը: Ինչպես ինքն է մարգարեացել:

«Այսուհետև բոլոր ազգերն ինձ երանի պիտի տան» (Ղուկաս 1.48):

Չնայած անցած դարերի հոլովույթին՝ տարեցտարի ասես ավելի մեծ խանդավառությամբ են տոնում և փառաբանում Սուրբ Կույսի առաքինությունները: Սուրբ Կույսի առաքինի և օրհնակելի կյանքը ողջ մարդկության համար ներշնչանքի մշտահոս աղբյուր է եղել դարեր շարունակ: Արդարեւ, բազմաթիվ ու բազմազան են Աստվածամոր առաքինությունները: Սակայն ես ցանկանում եմ խորհրդածության նյութ դարձնել նրա հավատը: Սուրբ Կույսն իր հավատով այնքան գերազանց եղավ, որ արժանացավ մեծագույն երանությանը՝ դարձավ Աստծո Որդու մայրը: Հովհաննես Մկրտչի մայրը՝ Եղիսաբեթը, առաջինն էր, որ համայն մարդկության կողմից ասաց.

«Օրհնյալ ես դու կանանց մեջ, եւ օրհնյալ է քո որովայնի պտուղը» (Ղուկաս 1.42):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՍԸ ԵՎ ԱՔՐԱՀԱՍԸ

Երբ համեմատենք Սուրբ Կույսի հավատն իր նախահայր Աբրահամի հավատի հետ, կտեսնենք, որ հավատի այս երկու անգերազանցելի դեմքերի միջև մեծ նմանություն կա: Կարող ենք համոզված ասել, որ Սուրբ Կույսն իր հավատով զերազանցում է նույնիսկ Աբրահամին:

Հին Ուխտում Աբրահամը հավատի գերագույն դեմքն է.

«Աբրահամը հավատաց Աստծուն, և այդ նրան արդարություն համարվեց» (Հռոմեացիս 4.3):

Եվ նույն հավատին պատկանողներն էլ պետք է Աբրահամի որդիներ կոչվեին (Գաղատացիս 3.7): Մեկ այլ տեղում ասվում է.

«Աբրահամը... որը մեր բոլորի հայրն է» (Հռոմեացիս 4.16):

Հետևաբար, ուղղակի կարող ենք ասել, որ հավատի առումով Սուրբ Կույս Մարիամն Աբրահամի հարազատ դուստրն էր, իսկ այլաբանորեն՝ որ Աբրահամը «ծնեց» Մարիամին, որը պիտի հանդիսանար անգերազանց հավատացյալ կինը ողջ պատմության մեջ և, նախահայր Աբրահամի օրինակով, կոչվեր «մեր բոլորի մայր Սուրբ Կույս Մարիամ»:

Ահավասիկ երկու մեծ դեմքեր, որոնք իրենց հավատի շնորհիվ փոխեցին պատմության ընթացքը: Աբրահամն Աստծուն հավատալով՝ հիմնեց Իսրայելի կրոնը և միևնույն ժամանակ եղավ Իսրայելի ցեղի նախահայրը: Նմանապես Սուրբ Կույսը, Աստծուն և Նրա Միածին Որդուն հավատալով, դարձավ քրիստոնյաներիս հավերժական Մայրը: Աբրահամն զգաց Աստծո գոյությունն իր մեջ: Սուրբ Կույսն Աստծո Որդու գոյությունը մարմնապես կրեց իր արգանդում:

Այսպես, համեմատելով հավատի այս երկու մեծ դեմքերին՝ կտեսնենք, թե որքան նմանություններ կան նրանց

կյանքում: Չնայած դարերի հեռավորությանը՝ երբեմն հանդիպում ենք նույնիսկ նույն նախադասության գործածությանը, քանի որ նույն հավատն է, որ գործում է «հոր» և «աղջկա» մեջ: Այսպես՝ Տերն Աբրահամին ասում է.

«Դու օրհնյալ պիտի լինես» (Ծննդոց 12.2):

Մարիամին ասվում է.

«Օրհնյալ ես դու կանանց մեջ» (Ղուկաս 1.42):

Հրեշտակն ասել է.

«Մի՛ վախեցիր, Մարիամ» (Ղուկաս 1.30):

Նույն նախադասությունն ասվել է նաև Աբրահամին.

«Մի՛ վախեցիր, Աբրամ, ես քեզ վահան եմ» (Ծննդոց 15.1):

Հրեշտակը Մարիամին ասաց.

«Քանզի Աստծուց շնորհ գտար» (Ղուկաս 1.30):

Աբրահամն իր մոտ եկող հրեշտակին ասաց.

«Տեր իմ, եթե հիմա Քո առաջ շնորհ գտա, աղաչում եմ Քեզ, մտիր քո ծառայի բնակարանը» (Ծննդոց 18.3):

«Եվ ահա պիտի հղիանաս և մի որդի պիտի ծնես և Նրա անունը Հիսուս պիտի դնես» (Ղուկաս 1.31):

Եվ Աբրահամի մոտ հյուրընկալվող հրեշտակն ասաց նրան.

«Հաջորդ տարի, անշուշտ, քեզ մոտ պիտի վերադառնամ, և ահա քո կինը՝ Սառան, որդի պիտի ունենա» (Ծննդոց 18.10):

«Ինչպե՞ս պիտի այդ բանը լինի,- ասաց Մարիամը հրեշտակին,- քանի որ տղամարդ չեմ տեսել» (Ղուկաս 1.34):

Իսկ Աբրահամին որդու ծնունդն ավետվելու ժամանակ Սառան է տարակուսում.

«Եվ Սառան մտքում ծիծաղեց՝ ասելով. «Այն բանը, որ մինչև հիմա չկարողացա, հիմա՞ պիտի կարողանամ, երբ տերս էլ արդեն ծերացել է» (Ծննդոց 18.12):

Հրեշտակը պատասխանեց Կույսին.

«Աստծո մոտ անհնարին բան չկա» (Ղուկաս 1.37):

Հրեշտակը նույն կերպ է պատասխանում նաև Աբրահամին ու Սառային:

«Մի՞թե Տիրոջ առջև անհնարին բան կա» (Ծննդոց 18.14):

Սուրբ Կույսի պատասխանն այս էր:

«Ահա ես Տիրոջ աղախինն եմ, թող լինի քո ասածի համաձայն» (Ղուկաս 1.38):

Այսպիսով տեսանք, թե նմանության որքան եզրեր կան Աբրահամի և Մարիամի պատմությունների միջև:

Շարունակենք:

«Երբ հրեշտակներն այնտեղից դուրս եկան, Աբրահամն էլ դուրս եկավ նրանց ճանապարհ դնելու: Եվ Տերն ասաց.

«Մի՞թե Աբրահամից պիտի թաքցնեմ ինչ որ անելու եմ. որովհետև Աբրահամն, անշուշտ, մեծ ու հզոր ազգ պիտի լինի, և երկրի բոլոր ազգերը նրա միջոցով պիտի օրհնվեն» (Ծննդոց 18.16-18):

«Եվ հրեշտակը նրա (Մարիամի) մոտից գնաց: Այդ ժամանակ Մարիամը վեր կացավ և շտապ գնաց Հուդայի քաղաքներից մեկը, մտավ Զաքարիայի տունը» (Ղուկաս 1.38-40):

Այստեղ Սուրբ Կույսը երգեց իր օրհնությունը, որը մենք դրա առաջին բառով «Մեծացուցե՛ք» ենք կոչում: Սրա մեջ կարող եք գտնել այն երանությունները, որոնք Աբրահամին էլ են ասվել:

«Եվ իմ հոգին իմ Փրկիչ Աստծով ուրախացավ» (Ղուկաս 1.47):

«Աբրահամը՝ ձեր հայրը, ուրախացավ, որ տեսնելու է Իմ օրը. տեսավ և ուրախացավ» (Հովհաննես 8.56):

«Եվ այսուհետև բոլոր ազգերն ինձ երանի պիտի տան» (Ղուկաս 1.48):

«Երկրի բոլոր ազգերը քեզանով պիտի օրհնվեն» (Ծննդոց 12.3):

Երբ Աբրահամն Աստուծոց պատվեր ստացավ իր հայրենի տունն ու քաղաքը թողնելու և գնալու այն երկիրը, որ ժառանգություն պիտի ստանար,

«Վեր կացավ գնաց ու չգիտեր, թե ուր է գնում» (Եբրայեցիս 11.8):

Նույն կերպ էլ Սուրբ Կույսը, երբ հրեշտակից ստացավ մայր լինելու ավետիսը, հնազանդվեց Աստծո հրամանին:

«Եվ չգիտեր՝ ուր է գնում»:

Մարիամի նշանածը, ինչպես կարդում ենք, արդեն նկատել էր նրա հղիությունը:

«Նրա նշանածը՝ Հովսեփը, արդար մարդ էր, չցանկացավ նրան խայտառակել, որոշեց թաքուն արձակել նրան»:

Սակայն հրեշտակը երազում հայտնում է ճշմարտությունը, որ նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է:

«Եվ մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս կդնես» (Մատթեոս 1.19-21):

«Հովսեփն... իր կնոջն առավ իր մոտ» (Մատթեոս 1.24):

Նույն ձևով էլ Տերն Աբրահամին հայտնվեց և նրան ասաց:

«Քո սերնդին պետք է տամ Քանանի այս երկիրը» (Ծննդոց 12.7):

Այնուհետև Աստված, Աբրահամի հավատը փորձելու նպատակով, նրա միևնուճար ու սիրելի զավակին զոհ մատուցել կարգադրեց: Եվ Աբրահամը ցույց տվեց Աստծո հանդեպ իր հավատի մեծությունը՝ դառնալով հավատի ամենախիզախ օրինակը աշխարհի սկզբից սկսած:

«Հավատով է, որ Աբրահամն իր փորձության պահին Իսահակին պատարագ մատուցեց. և նա, որ խոստում էր ստացել, իր միևնուճար որդուն էր որպես պատարագ մատուցում, նրան, ում համար ասված էր, թե՝ «Իսահակի միջոցով քեզ պիտի սերունդ տամ»: Քանի որ մտածում էր, թե Աստված մեռելներից էլ կարող է հարություն տալ, ուստի և, իբրև օրինակ, ես ստացավ իր որդուն» (Եբրայեցիս 11.17, 19):

Աբրահամն իր այս անասան հավատի շնորհիվ բարձրացրեց իր դիրքն Աստծո աչքին, և Աբրահամից հզոր

մի ազգ առաջ եկավ: Երբ Սուրբ Կույսը Գողգոթայի բարձունքին կանգնած էր իր պատարագվող Որդու խաչի մոտ, հրեաների երեկոյան պատարագի ժամանակ (Ելից 12.6, Բ Օրինաց 16.6), Քրիստոսն էր իբրև Աստծո Գառ՝ (Յովհաննես 1.29) հավիտենական Ջատկի Սուրբ Պատարագ մատուցվում էր անձով (Եբրայեցիս 10.10): Սուրբ Կույսը լսում էր ամբոխի ծաղրուծանակը.

«Եթե Աստծո Որդին ես, իջիր այդ խաչից»:

Քահանայապետերը նույնպես, դպիրների ու ծերերի հետ, ասում էին ծաղրանքով.

«Ուրիշներին փրկեց, Ինքն Իրեն չի կարողանում փրկել: Եթե Իսրայելի Թագավորն է, թող խաչից իջնի, և Իրեն կհավատանք: Իր հույսն Աստծո վրա էր դրել, հիմա թող փրկի Դրան, եթե հավանում է Դրան, քանի որ ասաց, թե ես Աստծո Որդի եմ» (Մատթեոս 27.40-43):

Սակայն Սուրբ Կույսն իր նախահայր Աբրահամի նման անասան հավատ ուներ: Ինքը ևս իր Միածին Որդու համար խոստումներ էր ստացել.

«Նա մեծ պիտի լինի և Բարձրյալի Որդի պիտի կոչվի, և Տեր Աստված Նրան պիտի տա իր հոր՝ Դավթի Գահը և Յակոբի տան վրա հավիտյան պիտի թագավորի: Եվ նրա թագավորությունը վախճան պիտի չունենա» (Ղուկաս 1.32-33):

Սուրբ Կույսն էլ հավատաց, որ Աստված մեռելներից էլ կարող է հարություն տալ, ուստի և հարության օրինակով ընդունեց նրան:

Ահա ջանացինք մի քանի տողով ցույց տալ, թե որքան շատ են նմանությունները Սուրբ Կույսի հավատի և հայր Աբրահամի հավատի միջև: Աբրահամը համոզված էր, որ Աստված մեկն է ու հետևեց Նրան, և Աստված էլ նրան աստղերի չափ մեծաթիվ ազգի նախահայրը դարձրեց: Նրանից սերված Սուրբ Կույսն էլ այդ միակ Աստծո Որդուն մարմին տվեց, որով էլ առաջացավ քրիստոնեությունը:

ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍՆ ՈՒ ՋԱՔԱՐԻԱ ՔԱՅԱՆԱՆ

Սուրբ Կույս Մարիամի անխախտ հավատն ավելի ցայտուն, ավելի հստակ ու պայծառ կերևա, եթե համեմատենք այն ժամանակվա քահանայի հավատի հետ: Այդ քահանան Յովհաննես Կարապետի՝ Յովհաննես Մկրտչի հայրն էր: Դարձյալ ականատես ենք ավետման: Գաբրիել հրեշտակը տաճարում երևաց այն պահին, երբ Ջաքարիա քահանան այնտեղ խնկարկություն էր կատարում: Երբ հրեշտակն ավետեց Ջաքարիային, որ նրա աղոթքները լսվել են, և նա արուզավակ պիտի ունենա, քահանան երկմտեց, թե կարո՞ղ է ծեր տարիքում զավակ ունենալ... Եվ Ջաքարիան հարցրեց.

«Ինչպե՞ս համոզվեմ այդ բանում, քանի որ ես ծեր մարդ եմ, և կինս էլ տարիքն առած է»:

Հրեշտակը պատասխանեց նրան.

«Ես Գաբրիելն եմ, որ Աստծո առջև եմ կանգնում և ուղարկվել եմ քեզ այդ ավետիսը տալու: Եվ ահա համր պիտի լինես և չպիտի կարողանաս խոսել մինչև այն օրը, երբ այս ամենը կկատարվի, քանի որ չհավատացիր իմ ասածին, որն իր ժամանակին կատարվելու է» (Ղուկաս 1.18-20):

Սուրբ Գրքում շատ պատմություններ կան Ջաքարիայի նման ծեր հասակում երեխա ունեցողների, ինչպես նաև զավակ ծնած ամուլ կանանց մասին: Գիտենք Աբրահամ նահապետի և Սառայի դրվագը: Սուրբ Գրքում կարդում ենք, որ ամուլ էր նաև Յակոբի կին Ռաքելը.

«Աստված հիշեց Ռաքելին, նրա արգանդը բացեց, և նա հղիացավ և ծնեց Յովսեփին» (Ծննդոց 30.22-23):

Այսուհետև Ռաքելն ունեցավ նաև Բենիամինին (Ծննդոց 35.16): Սամփսոնը ևս ամուլ ծնողների զավակ էր: Դանի ցեղից Մանուվեի կինն ամուլ էր, և ահա հրեշտակն ավետեց նրան, թե՛

«Դու հիմա ամուլ ես, չես ծննդաբերում, բայց պիտի հղիանաս և որդի պիտի ծնես» (Դատավորաց 13.3):

Եվ կինը մի որդի ունեցավ և նրա անունը Սամփսոն դրեց (Դատավորաց 13.24): Աննան էլ, թեև շատ աղոթասեր ու բարեպաշտ կին էր, սակայն ամուլ էր: Աննան Աստծուց խնդրել էր, որ իրեն զավակ տա: Աստված լսեց նրա աղաչանքն ու որդի տվեց, և նրա անունը Սամվել դրին (Ա Թագավորաց 1):

Չաքարիա քահանան այս բոլորը քաջ գիտեր Սուրբ Գրքից. նրա նախահայրերից ոմանք նույնպես Աստծո զորությամբ և հրաշքով էին ունեցել իրենց որդիներին: Ուրեմն նրան տրված խոստումը եզակի, չլսված մի բան չէր: Բայց, այդուամենայնիվ, նա երկմտեց, Աստծո ամենակարող զորությանը թերահավատորեն վերաբերվեց: Իսկ Սուրբ Կույսի պարագան բոլորովին եզակի էր: Միայն Եսայու մարգարեության մեջ էր ասված, թե՝

«Ահա կույսը պիտի հղիանա և որդի ծնի, և նրա անունը Էմմանուել պիտի կոչվի (Եսայի 7.14).

Էմմանուել, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ» (Մատթեոս 1.23):

Մի ծնունդ, որը եզակի է և պետք է անկրկնելի մնա ողջ պատմության ընթացքում: Չնայած սրան՝ Սուրբ Կույսը հավատաց, որ Սուրբ Յոզու զորությամբ ինքը կարող է Որդի ծնել:

«Սուրբ Յոզին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ հովանի կլինի»,- այդպես էր ասել նրան հրեշտակը (Դուկաս 1.35):

Մենք ևս, նրա հավատացյալ զավակները, Սուրբ Կույսի կյանքի պատմությունից սովորում ենք այս հավատի դասը, որը քրիստոնյայի մեծագույն առաքինությունն է: Հավատի այս վարդապետությունն է, որ Պողոս առաքյալի գլխավոր նյութը պետք է դառնար, և նա, մեջբերելով Ամբակուն մարգարեի խոսքը, պետք է ասեր.

«Արդարը հավատով պիտի ապրի» (Ամբակուն 2.4, Հռոմեացիս 1.17):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԻՍՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՅՐԸ

Ավետարաններում հիշատակվում են Աստվածամոր կյանքի միայն այն դրվագները, որոնք առնչվում են Քրիստոսի կյանքին և փրկագործությանը: Չնայած այդքան սուղ տեղեկություններին՝ դարձյալ կտեսնենք, որ նրա հավատն ավելի ցայտուն է ցոլանում Որդու՝ Քրիստոս Աստծո հանրանկարում: Այստեղ պետք է նշեն, որ Տիրամոր մասին հատվածները գրված են առանձնակի ոճով, որը շուտով կտեսնենք: Այդ պատճառով, նրանք, ովքեր մակերեսայնորեն են կարդացել և չեն թափանցել խորքը, Աստվածամորը նվազ հարգանքի արժանի են կարծում և, հետևաբար, քննադատում են հին եկեղեցիներին, այդ թվում նաև մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ արարողակարգում Աստվածամորն այսքան մեծ ու կարևոր տեղ տալու համար:

Հավաստելու համար մեր ասածը, մեկ առ մեկ քննենք այն հատվածները, որոնցում հիշատակվում է Սուրբ Կույսը:

1 - ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Հիսուսն իր առաջին հրաշքը կատարել է Կանայի հարսանիքում՝ մոր բարեխոսությամբ (Հովհաննես 2.1-11):

Գալիլեայի Կանա քաղաքում հարսանիք կար. այնտեղ էին Հիսուսը, Տիրամայրը և Հիսուսի աշակերտները: Երբ գինին վերջացավ, Տիրամայրն ասաց իր Որդուն, թե՝ գինի չունեն: Հիսուսը պատասխանեց.

«Ո՛վ կին, դու ինձ հետ ի՞նչ գործ ունես. իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհաննես 2.4):

Ա.-Գրաբարն այսպես է՝ **«կին դու»:** Հասարակ ընթերցողի համար մի փոքր զարմանալի է թվում, էլ չասենք տարօրի-

նակ, որ մեկն այս ձևով է դիմում իր մորը, այն էլ հասարակության առաջ: Այդ պատճառով էլ շատ բացատրություններ են գրվել՝ արդարացնելու համար նման դիմելաձևը: Օրինակ, ասում են, թե հրեաների շրջանում մորը **«կին»** կոչելն ընդունված ձև էր: Ոմանք էլ այս **«կին»** անվան մեջ նվաստացուցիչ բան են ցանկանում փնտրել:

Հիսուսի՝ իր մորն **«ով կին»** ձևով կոչելու մեջ արտացոլվում է պարզ կին էակը, այլ ոչ թե մայրը՝ զգացական առումով: Ինչպես որ ինքն էր Աստծո Որդի լինելով՝ իրեն կոչում **«մարդու Որդի»** (Մատթեոս 8.20), **«սպասավոր»**, **«ծառա»** (Ղուկաս 22.27, Յովհաննես 13.14): Ինչպես որ ինքն այս պարզությամբ պիտի լիովին գլուխ բերեր իր առաքելությունը (Մարկոս 10.40, 43), այնպես էլ իր մորն էր կին դերի մեջ դնում: Եթե սա հասկանանք, այլևս մեզ բավական կթվա այս կին կոչումը:

Բ.-**«Ղու ինձ հետ ի՞նչ գործ ունես»** (Յովհաննես 2.4):

Ահա մի նախադասություն, որն այնքան վիճաբանությունների դուռ է բացել: Առաջին հայացքից, իրոք, մի փոքր անսովոր է հնչում, սակայն, երբ լավ ենք սերտում Քրիստոսի վարդապետության իմաստն ու ոգին, հասկանում ենք, որ, ընդհակառակը, սա մի խթան է՝ արժարժեղու Տիրամոր հավատը, որի շնորհիվ Քրիստոսն իր առաջին հրաշքը պիտի գործեր: Մեր Տեր Հիսուսը, երբ հրաշք պիտի կատարեր, նախևառաջ աղերսողի հավատն էր փնտրում և հետո միայն, եթե դիմացինը հավատալու կարողություն ուներ, կատարում էր իր հրաշքը կամ բժշկությունը: Օրինակ. երբ պետք է բժշկեր երկու կույրերին, հարցրեց նրանց.

«Կարո՞ղ եմ այս բանն անել ձեզ: Նրան ասացին՝ այո, Տեր: Այն ժամանակ դիպավ նրանց աչքերին և ասաց. «Թող ըստ ձեր հավատի լինի ձեզ: Եվ նրանց աչքերը բացվեցին» (Մատթեոս 9.28-29):

Մեկ այլ օրինակ. երբ Հիսուսն անապատում պետք է հինգ

հազար մարդու կերակրեր հինգ հացով և երկու ձկով, տեսնում ենք, որ նախ հարցնում է իր աշակերտ Փիլիպոսին.

«Որտեղի՞ց կարող ենք հաց գնել, որպեսզի սրանք ուտեն: Բայց այս բանն ասում է նրան փորձելու համար, քանի որ ինքը գիտեր, թե ինչ պիտի աներ» (Յովհաննես 6.5-6):

Այսպես փորձում էր մարդկանց հավատը և անցկացնում իր բովով՝ տեսնելու համար, թե նրանք իսկապե՞ս հավատում են իր աստվածային զորությանը: Ապա կատարում էր նրանց խնդրանքը, որպեսզի դա հետագայում ուրիշների համար օրինակ լիներ:

Հավատ դաստիարակելու մի ցայտուն օրինակ է քանանացի աղջկա բժշկումը (Մատթեոս 15.21-28): Քանանացի մի կին աղաչում էր Հիսուսին, որպեսզի տանը սաստիկ տառապող իր աղջկան ողորմի: Հիսուսը նույնիսկ չպատասխանեց, մինչև որ աշակերտները խղճահարված չմիջամտեցին:

«Հիսուսը պատասխանեց և ասաց. «Ես չեկա ուրիշների համար, այլ միայն Իսրայելի տան կորուսյալ ոչխարների»: Կինն այս անգամ ավելի մոտեցավ Հիսուսին և Նրան երկրպագելով՝ ասաց. **«Տեր, օգնի՛ր ինձ»:**

Հիսուսը դարձյալ այլաբանորեն պատասխանեց.

«Լավ չէ երեխաների հացը շների առաջ թափել»:

Կինը պատասխանեց.

«Ճիշտ է, Տեր, սակայն շներն էլ իրենց տիրոջ սեղանից թափված փշրանքներով են կերակրվում»:

Այդժամ Հիսուսն ասաց.

«Ո՛վ կին, մեծ է քո հավատը, թող քո ուզածի պես լինի»: Եվ նույն պահին նրա աղջիկը բժշկվեց:

Ահա այս երեք օրինակները որոշ չափով կարող են լուսաբանել մեր Տիրոջ գործելակերպը, որը նախ հարցերով փորձում է մարդկանց հավատը և ապա միայն, եթե արժանի են, կատարում նրանց խնդրանքը:

Ուրեմն այդ նույն հավատի մեծությունը փնտրեց իր մոր

մեջ, ոչ թե իբրև իր մոր, այլ իբրև մի սովորական կնոջ:

Չեմ հասկանում, թե ինչպես են ոմանք սխալ ըմբռնելով՝ «հանդիմանություն» տեսնում այստեղ: Եթե Հիսուսը հանդիմանած լիներ իր մորը, հնարավոր է արդյոք, որ մի վայրկյան հետո կատարեր նրա խնդրանքը: Խելքին մոտ բա՞ն է՝ հանդիմանել դիմացինին խնդրանքի համար և ապա անմիջապես կատարել նրա ուզածը: Մենք գիտենք, թե Նա մի անգամ ինչպես հանդիմանեց Պետրոսին, երբ վերջինս «պատիվ անելով» վիճարկեց Տիրոջ չարչարանքների և խաչելության մասին կանխասացությունը՝ ասելով.

«Քավ լիցի, Տե՛ր, այդ քեզ չի պատահի»:

Այդ ժամանակ Հիսուսն իսկապես հանդիմանեց նրան և, իհարկե, Պետրոսի փափագն այդպես էլ չիրականացավ (Մատթեոս 16.22-23, Մարկոս 8.33): Ինչպես վերևում բերված օրինակներում տեսանք, ըստ էության, եղածը ոչ թե հանդիմանություն էր, այլ պարզապես ազդակ, որպեսզի երևան գար Տիրամոր հավատի գործությունը, և նա արժանանար Հիսուսի առաջին հրաշքը տեսնելու պատվին:

Ուրեմն՝ այնքան մեծ էր նրա մոր հավատը Որդու հանդեպ, որ առանց վայրկյան իսկ վարանելու պատվիրում է իր մոտ կանգնած սպասավորներին.

«Ինչ որ ասի ձեզ՝ արեք»: Այն ժամանակ Հիսուսն ասաց նրանց. **«Այդ կարասները լցրեք ջրով»**, և լցրին: Գոյացածն աշխարհի լավագույն գինին էր, որն էլ եղավ Քրիստոսի գործած առաջին հրաշքը:

Գ.- **«Իմ ժամանակը դեռ չի հասել»** (Հովհաննես 2.4):

Այստեղ էլ, անշուշտ, եթե լավ չըմբռնենք և չհասկանանք ասվածի էությունը, հակասություն պիտի տեսնենք: Նախ՝ ասում է, թե Իմ ժամանակը դեռ չի եկել, ապա՝ անմիջապես ավելացնում է. **«Լցրե՛ք այդ կարասները»:** Անշուշտ, այստեղ ոչ մի հակասություն էլ չկա, այլ պարզապես արտահայտվե-

լու, խոսելու ոճ է: Նմանատիպ խոսելաձևի ենք հանդիպում նաև հետևյալ օրինակներում:

Երբ հարություն առած Տերը հանդիպեց էմմավուսի ճամփորդներին և, նրանց հետ խոսելով,

«Մոտեցան այն գյուղին, ուր գնում էին նրանք, այնպես ցույց տվեց, թե իբր, ավելի հեռու տեղ պետք է գնա, բայց նրանք ստիպեցին Նրան և ասացին. «Մեզ մոտ մնա»: **Հիսուսն էլ մտավ նրանց հետ գիշերելու»** (Դուկաս 24.13-29):

Նմանատիպ մի այլ օրինակ ևս. Գալիլեայի լճի ակեկոծության ժամանակ Հիսուսը ջրի վրայով քայլելով եկավ իր աշակերտների մոտ և ցանկանում էր նրանց կողքով կարծես թե անցնել-գնալ: Սակայն աշակերտները ցանկացան Նրան նավակի մեջ առնել, և Նա էլ նրանց մոտ՝ նավակ բարձրացավ (Մարկոս 6.46-50): Այդ օրինակները պատկերավոր կերպով լուսաբանում և կրկնում են **«Իմ ժամանակը դեռ չի հասել»** խոսքը:

2 - ՈՎԹԵ՞Ր ԵՆ ԻՍ ՄԱՅՐՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ
(ՄԱՐԿՈՍ 3.33)

Մի ուրիշ անգամ, երբ Հիսուսը խոսում էր ժողովրդի առջև, Նրա մայրն ու եղբայրները (ազգականները) եկել, դրսում կանգնել էին ու կամենում էին խոսել հետը, սակայն հավաքված բազմության պատճառով չէին կարողանում Նրան մոտենալ: Վերջապես Նրան ասացին, թե՝

«Ահավասիկ քո մայրը, եղբայրները դրսում կանգնած են և կամենում են քեզ հետ խոսել»: Հիսուսը պատասխանեց.

«Ովքե՞ր են Իմ մայրը կամ եղբայրները»: Եվ նայելով իր շուրջը նստածներին՝ ձեռքը պարզեց աշակերտներին ու ասաց.

«Ահա Իմ մայրը և եղբայրները: Որովհետև ով Իմ երկնավոր Հոր կամքը կատարի՝ նա կլինի Իմ եղբայրը և քույրը և մայրը» (Մատթեոս 12.46-50, Մարկոս 3.31-35):

Նախ պետք է ասեն, որ Հիսուսն իր քարոզության

ժամանակ իր անձի մասին էլ էր մոռանում, որպեսզի ավելի լավ բացատրի իր առաքելության կարևորությունն ու վեհությունը, որի նպատակը միայն իր երկնավոր Հոր կամքը կատարելն էր, ինչը տեսնում ենք հետևյալ օրինակում.

«Երբ վերադարձան տուն, ժողովուրդը դարձյալ հավաքվեց, այնպես որ հաց ուտելու ժամանակ էլ չկարողացան գտնել: Եվ երբ յուրայինները լսեցին, վեր կացան նրան բռնելու, որովհետև կարծում էին, թե խելքը կորցրել է» (Մարկոս 3.20-21):

Մի այլ անգամ, երբ կեսօրին խոսում էր սամարացի կնոջ հետ, իսկ աշակերտներն իրեն աղաչում ու ասում էին.

«Ռաբբի, հաց կեր»,

Հիսուսը պատասխանեց.

«Իմ կերակուրն այն է, որ Ինձ ուղարկողի կամքը կատարեմ» (Հովհաննես 4.31-34): Կարծում են այս օրինակները բավական են ցույց տալու, որ մեր Տիրոջ համար գերագույն և էական գործն Աստծո կամքը կատարելն էր: Ուրեմն՝

«Ով որ Իմ երկնավոր Հոր կամքը կատարի, նա է Իմ եղբայրը և քույրը և մայրը»:

Այսպիսով, Հիսուսը մեզ էլ է հնարավորություն տալիս իր եղբայրը, քույրը կամ մայրը դառնալու: Պայմանն, անշուշտ, հավատալն ու սիրելն է, ինչը Հովհաննես առաքյալի Ավետարանի և նրա ընդհանրական ուղերձների հիմնական նյութն է: Հավանաբար այս հնարավորությունից քաջալերված, Հովհաննեսի մայրը՝ Սողոմեն, մի անգամ իր երկու որդիների հետ մոտեցավ Հիսուսին, երկրպագեց Նրան և խընդրեց, որ իր որդիները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, Քրիստոսի թագավորության մեջ նստեն Նրա Փահի աջ և ձախ կողմերում: Հիսուսը պատասխանեց.

«Զգիտեք, թե ինչ եք խնդրում. կարող եք խմել այն գավաթը, որը պիտի ես խմեմ, կամ մկրտվեք այն մկրտությամբ, որով պիտի ես մկրտվեմ»:

Ձեքեդյան եղբայրները պատասխանեցին՝ կարող ենք: Եվ Հիսուսն ասաց նրանց. **«Իմ գավաթը կխմեք և այն մկրտությամբ, որով պիտի մկրտվեմ, կմկրտվեք: Սակայն իմ աջ և ձախ կողմում նստելն ինձնով չէ, այլ նրանց համար է, ում տրված է իմ Հորից»** (Մատթեոս 20.20-23):

Ուրեմն, վստահ կարող ենք ասել, թե Սուրբ Կույսը, որը կատարում էր երկնավոր Հոր կամքը, այդպիսով դառնում էր Քրիստոսի միակ արժանի Մայրը:

Այլ առիթով Հիսուսն ասել է.

«Եթե Աբրահամի որդիները լինեիք, Աբրահամի գործերը կգործեիք» (Հովհաննես 8.39):

Մենք արդեն տեսանք, որ Մարիամն իր հավատով նախահայր Աբրահամի հարազատ դուստրն էր: Ուրեմն՝ Սուրբ Կույսն այս պարագայում լինում է Քրիստոսի մարմնավոր մայրը, իսկ երկնավոր Հոր կամքը կատարելով՝ դառնում է Քրիստոսի հավիտենական մայրը:

3 - ԵՐԱՆԻ՝ ԱՅՆ ՄՈՐԸ (ՂՈՒԿԱՍ 11.27-29)

Այս նույն միտքը տեսնում ենք նաև հետևյալ երանության մեջ: Մի կին Հիսուսին ասաց.

«Երանի՛ այն որովայնին, որը Քեզ կրեց, և այն ստինքներին, որոնք Քեզ կաթ տվեցին»: Իսկ Հիսուսը նրան պատասխանեց. **«Մանավանդ երանի՛ նրանց, ովքեր լսում և պահում են Աստծո խոսքը»** (Ղուկաս 11.27-29):

Այստեղ նույնպես երկու երանություններն էլ հասցեագրված են ուղղակի Աստվածամորը: Ոչ միայն առաջինը (որն ինքնըստինքյան հասկանալի է), այլև Քրիստոսի ավելացրած երկրորդ երանությունը ևս, ըստ վերևում մեր ասածի, իր մորն է ուղղված, քանի որ Սուրբ Կույսն Աստծո խոսքը ամբողջությամբ կատարողներից է եղել:

Ահա այսքան քիչ բան է գրված Աստվածամոր մասին: Սակայն այդ քիչն էլ բավական է Սուրբ Կույսի հավատը ցայտուն կերպով դրսևորելու և մեզ օրինակ ծառայեցնելու համար: Եվ այս քիչ տեղեկություններն այնքան են ներկայացված, որ հաստատում են մեր Փրկչի հետևյալ խոսքերը.

«Ով որ ունի, նրան պիտի տրվի և պիտի ավելացվի, և ով որ չունի, նրանից ունեցածն էլ պետք է վերցվի» (Մատթեոս 13.12):

Կամ՝

«Որպեսզի նայելով հանդերձ՝ չտեսնեն և լսելով հանդերձ՝ չիմանան» (Մարկոս 4.12):

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ ՄԵՐ ԲՈԼՈՐԻ ՄԱՅՐՆ Է

Հիսուսը խաչի վրա իր վերջին վայրկյաններին նկատեց դառնակակիծ մորը, որն իր սիրելի աշակերտ Յովհաննեսի և մի քանի կանանց հետ կանգնած էր խաչի մոտ: Այստեղ էլ է Հիսուսն իր մորը դարձյալ **«կին դու»՝ «ով կին»** ասում: Եվ սրա մասին էլ են շատ մեկնություններ գրվել: Ոմանք ասում են, թե Հիսուսն իր մորն ավելի չվշտացնելու համար է այդպես դիմել նրան, ուրիշներն էլ պնդում են ճիշտ հակառակը, թե՛ Հիսուսն այստեղ **«ով կին»** ասելով կամեցել է տեղեկացնել, որ Մարիամն իր աստվածային բնության մայրը չէ, և որ Ինքը երկնավոր Հոր Որդին է: Ի՞նչ սխալ, ի՞նչ տարօրինակ մեկնություն: Մարդ ականա սկսում է մտածել, թե սրանք պարզապես հակառակություն ունեն Աստվածամոր հանդեպ: Այստեղ **«կին»** բառը Կանայի հարսանիքում ասվածից տարբեր իմաստ ունի: Ինչպես տեսանք, այն ժամանակ հավատի կինն էր, որով առաջին հրաշքը պիտի գործվեր, իսկ այս դեպքում տառապյալ կինն է, որի

«Սրտի միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի այդպես շատ սրտերի խորհուրդներ հայտնվեն» (Ղուկաս 2.35):

Իր չարչարանքներն ու խաչելությունը Հիսուսը նմանեցրել է կնոջ երկունքին.

«Երբ կինը ծննդաբերում է, տրտմում է, քանի որ հասել է ժամը, բայց երբ երեխան ծնվի՝ ուրախությունից էլ չի հիշելու նեղությունը, քանի որ մի մարդ աշխարհ եկավ» (Հովհաննես 16.21):

Այստեղ այլաբանորեն կարող ենք ասել, որ սուրբ Եկեղեցու ծնունդն է տեղի ունենում այն պահին, երբ իր մորը հանձնում է սիրելի աշակերտին.

«Ո՛վ կին, ահա՛ քո որդին»,

իսկ աշակերտին էլ ասում է.

«Ահա՛ քո մայրը» (Հովհաննես 19.27):

Հիսուսն իր խաչելությամբ և պատարագվելով փառա-

վորեց իր երկնավոր Հորը.

«Աստված նրա մեջ փառավորվեց» (Հովհաննես 13.32),

իր պատվական արյամբ գնեց մեզ՝

«Իմանալով, որ կորստյան ենթակա արծաթով կամ ոսկով չէր, որ փրկվեցիք ձեր հայրերից ժառանգած ունայն կենցաղից, այլ անբիծ ու անարատ Գառան՝ Քրիստոսի թանկագին արյամբ» (Ա Պետրոս 1.19), և նույն պահին էլ ծնունդ տվեց սուրբ Եկեղեցուն՝

«Օրհնյալ է Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմությամբ վերստին ծնեց մեզ կենդանի հույսի համար» (Ա Պետրոս 1.3),

«Աստված մեր հայրերին տված իր խոստումը կատարեց մեր օրերին, մեզ համար՝ Հիսուսին հարություն տալով» (Գործք 13.33), իսկ այդ կինը դարձավ այս նորաստեղծ Եկեղեցու հավատացյալների Մայրը: Եվ իրականացավ երկրորդ Սաղմոսի 7-րդ տան մարգարեության խորհուրդը.

«Տերն Ինձ ասաց. Դու Իմ որդին ես, ես այսօր քեզ ծնեցի»:

Այսպես տեղի ունեցավ սուրբ Եկեղեցու ծնունդը՝ սաղմոսերգուի մարգարեության համաձայն:

Սուրբ Կույսը հավատացյալներիս Մայրն է դառնում ոչ միայն այս անցավոր աշխարհի, այլև հավիտենական կյանքի համար: Ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսն է ասել աղքատ Ղազարոսի առակի օրինակով, իսրայելացի արդարներն իրենց հայր Աբրահամի գրկում պիտի հանգչեն.

«Երբ աղքատը (Ղազարոսը) մեռավ, հրեշտակներն Աբրահամի գիրկը տարան նրան» (Ղուկաս 16.22):

Մենք արդեն տեսանք, որ Սուրբ Կույսը հավատի կյանքով հար և նման է իր նախահայր Աբրահամին, և նույն կերպ էլ նա պիտի մեզ՝ հավատացյալներիս ընդունի իր մայրական գիրկը հավիտենականության մեջ:

Ճիշտ այս վարդապետության համաձայն՝ մեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անդադար խնդրում է Աստվածամոր բարեխոսությունը, և յուրաքանչյուր Սուրբ Պատարագի ընթացքում սուրբ Գրիգոր Նարեկացու հետ միասին աղոթում ենք.

**«Ահա կաթիլ մի կաթին քունդ կուսութեան յանձն իմ ան-
ծրևեալ՝ կենաց ինձ ցողէ մայրդ»:**

Թարգմանությունը՝ Ահա քո կուսական կաթի մեկ կաթիլն
իմ անձի մեջ անծրևելով՝ կյանք է տալիս ինձ, ո՛վ Մայր (Բան
Ձ. Երրորդ տուն):

Ուրեմն, այսպես, յուրաքանչյուր Սուրբ Պատարագի
ընթացքում մեր Փրկչի Մարմնի և Արյան խորհրդին հա-
ղորդվելով՝ նույն պահին էլ, անշուշտ, հաղորդվում ենք Աս-
տվածամոր արյանը, իսկական մոր նման նրա արյունն ենք
ունենում մեր մեջ, և իր արյան սուրբ խորհրդով նա ծնում է
մեզ՝ իբրև իր հավատացյալ զավակներ և այս կերպով դառ-
նում է մեր բուրբիս Մայրը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ՀՈԳՈՎ ԵՎ ՄԱՐՄՆՈՎ
ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է ԵՐԿՆԱՅԻՆ ՓԱՌՔԸ

Սուրբ Աստվածածնի ննջելու և երկինք փոխադրվելու
հիշատակը նշում ենք «Վերափոխումն» կամ «Ննջումն
Սուրբ Կույսի» կոչվող տոնով: Սա մեր Եկեղեցու հինգ
հիմնական տոներից՝ տաղավարներից մեկն է և կատար-
վում է օգոստոսի 15-ին մոտ կիրակի օրը:

Համաձայն ավանդության՝ Քրիստոսի համբարձումից հե-
տո, Սուրբ Կույս Մարիամը տասնհինգ տարի ապրեց Երուսա-
ղեմում՝ Հովհաննես Ավետարանչի որդիական խնամքի ներ-
քո: Ապա Սուրբ Կույսը խաղաղ ու հանգիստ մահացավ: Քրիս-
տոսի բուրբ առաքյալները հանդիսավոր թափորով թաղումը
կատարեցին Գեթսեմանիի ձորակում: Նրա թաղումից հետո,
երեք օր՝ գիշեր ու ցերեկ, հրեշտակային երգեր էին լսվում իր
գերեզմանի շուրջը: Թաղմանը չէր մասնակցում միայն Բար-
դուղիմեոս առաքյալը, որը, սակայն, իմանալով Աստվածամոր
վախճանի մասին, փութով եկավ Երուսաղեմ: Առաքյալը ցան-
կանում էր անպայման մի վերջին անգամ տեսնել Սուրբ Կույ-
սին: Մյուս առաքյալների ուղեկցությամբ նա իջավ թաղման
վայրը: գերեզմանը բացին, բայց Սուրբ Կույսի մարմինն այն-
տեղ չէր: Սրանից եզրակացրին, որ Քրիստոսը, Իր խոստման
համաձայն, Իր մորը երկինք է վերափոխել:

Այս պատճառով էլ Սուրբ Կույսի մասին չենք ասում «մա-
հացավ», այլ՝ «ննջեց», որպեսզի հասկանալի դառնա նրա
երկինք վերափոխվելը:

Սույն ավանդությունն, անշուշտ, ծնունդ է առել առաքելա-
կան շրջանում: Այսպես, դեռ առաջին շրջանից տոնվում էր
Աստվածածնի ննջման տարեդարձը: Երուսաղեմյան ճաշո-
ցում (Երուսաղեմ թիվ 121, «ճաշոց-Տոնացույց», ձեռագիր),
այն հիշատակվում է 4-րդ դարից: Դա համարվում է Աստվա-

ծածնին նվիրված տոներից հնագույնը: Տիրամոր վերափոխումն իբրև վարդապետություն ընդունվել է 9-12 դարերից:

Հռոմեական Եկեղեցին Աստվածածնի վերափոխումը իր հիմնական վարդապետության կարգը դասեց 1950 թվականին՝ տոնելով այն նոյեմբերի 1-ին՝ Ամենայն Սրբոց տոնի օրը: Հարմար է հիշեցնել, որ Քրիստոսին նվիրված բոլոր տերունական տոներն էլ այսպես, ժամանակի ընթացքում են ձևավորվել և ապա սկսել տոնվել: Ջատիկը՝ Հարության տոնը, Սուրբ Ծնունդը, Համբարձման տոնը և այլն:

Քրիստոսը ծածուկ մեծացող սերմի առակով արդեն ասել է, որ Իր վարդապետությունը դարերի ընթացքում պետք է աճի, նախ՝ խոտ, հետո՝ հասկ, իսկ այնուհետև՝ լեցուն ցորեն տալու համար (Մարկոս 4.26-29): Սկսած առաքելական շրջանից՝ միշտ էլ սեր ու հարգանք են տածել Սուրբ Կույսի հանդեպ: Իսկ 431 թվականին Եփեսոսի տիեզերական ժողովում պաշտոնապես հռչակվեց ու դավանական սկզբունք դարձավ Սուրբ Կույսի Աստվածածին, այլ ոչ թե «մարդածին» լինելը, ինչպես պնդում էր Նեստորը: Այս նույն դավանանքն է որդեգրել նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Սուրբ Կույսի վերափոխման այս պատմությունը, ինչպես ասացի, ավանդությամբ է մեզ հասել, քանի որ Նոր Կտակարանում հիշատակություն կամ ակնարկ չկա այս մասին: Այդ իսկ պատճառով որոշ եկեղեցիներ ոչ միայն չեն ընդունել, այլև «հակասուրբգրային» են որակել այս տոնը: Սակայն հիշատակված չլինելու վրա չպետք է զարմանալ, որովհետև առաքելական սկզբնական շրջանում քարոզներն ու պատգամները նախընտրում էին միայն բերանացի հաղորդել: Գիրք չէին գրում, որովհետև համոզված էին, թե Քրիստոսի երկրորդ գալուստը շատ մոտ է (Ա Կորնթացիս 15.51, Ա Թեսաղոնիկեցիս 4.14): Այդ պատճառով էլ հարկ չէին համարում իրենց տեսածն ու լսածը գրի առնել:

Առաջին Ավետարանը գրեց Մարկոս ավետարանիչը 65 թվականին՝ գոհացնելու համար հեթանոսությունից դարձի եկած հույն և հռոմեացի քրիստոնյաների՝ Հիսուսի կյանքի, վարդապետության և հարության մասին ավելի շատ բան իմանալու ցանկությունը: Ավետարանն սկսվում է Հիսուս

Քրիստոսի մկրտությամբ: Հիսուսի ծննդյան մասին ոչ մի խոսք չկա: Այնուհետև, 68-70 թվականներին Մատթեոս ավետարանիչը գրեց իր Ավետարանը: Վերջինս խոսում է Քրիստոսի ծննդյան մասին միայն Հովսեփի տեսանկյունից: Երրորդը՝ Ղուկաս ավետարանիչն էր: Նա իր Ավետարանը գրեց 70-75 թվականներին, որտեղ մանրամասն նկարագրում է Հիսուսի ծնունդը՝ ներկայացված Սուրբ Կույս Մարիամի կողմից: Իսկ 95 թվականին Հովհաննես Ավետարանիչը, գրելով իր Ավետարանը, մի տեսակ ամբողջացրեց նախորդները: Նա շեշտում է.

«Ուրիշ շատ բաներ էլ արեց Հիսուսը, բայց եթե դրանց մասին գրվի մեկ առ մեկ, կարծում եմ, որ աշխարհում իսկ չեն տեղավորվի գրված այդ գրքերը» (Հովհաննես 21.25):

Ուրեմն՝ չորս ավետարանիչները քիչ բան են պատմել մեր Տիրոջ մասին: Ինչպես ասացի, սկզբնական շրջանում բոլոր պատմությունները, պատգամները երկար ժամանակ միայն բերանացի էին ավանդվում և այդպես էլ անգիր կերպով փոխանցվում էին սերնդեսերունդ, մինչև որ մի օր գրի առնվեցին և կոչվեցին «ավանդություն»: Հետևաբար ավանդությունն առաքելական ծագում ունի, և սա է, անշուշտ, ամենակարևորը:

«Ավանդությունները պահում եք, ինչպես որ ավանդեցի ձեզ» (Ա Կորնթացիս 11.2):

Կամ

«Եվ ուրիշ բաներ էլ կպատվիրեն ձեզ, երբ գամ» (Ա Կորնթացիս 11.34):

Սա նշանակում է, որ առաքյալի քարոզած ճշմարտությունը, պատվիրած սովորությունները կամ օրենքները միշտ չէ, որ գրավոր են եղել, այլ շատ բան «պատվիրված» է, այսինքն՝ ավանդված է և գրի չի առնվել: Մեկ այլ առիթով էլ Հովհաննես առաքյալն է գրում.

«Շատ բաներ ունեի ձեզ գրելու, բայց չցանկացա թղթով ու մելանով գրել, որովհետև հուսով եմ, որ ձեզ մոտ կգամ և երես առ երես կխոսեմ» (Բ Հովհաննես 12):

Մի ուրիշ տեղում՝

«Եվ երբ այս ուղերձը ձեզ մոտ կարդացվի, ապա լավողիկեցիների եկեղեցում էլ կարդալ տվեք, և դուք էլ Լավողիկեցիները»

կեայից եկած ուղերձը կարդացեք» (Կողոսացիս 4.16):

Այսպես է պատվեր տալիս Պողոս առաքյալը կողոսացիներին: Դժբախտաբար, լավոդիկեցիներին ուղղված հիշյալ ուղերձը մեզ չի հասել. չգիտենք, թե առաքյալն ինչեր է գրել և ավանդել մեզ: Այս բոլորը հաստատում են, որ առաքյալները, իրենց գրածներից բացի, ուրիշ շատ բաներ էլ են ավանդել եկեղեցուն, որը պահվել և իր հերթին ավանդվել է հաջորդ սերունդներին: Ահա մի օրինակ.

«Երանելի է տալը, քան թե ստանալը» (Գործք 20.35):

Սա Հիսուսն է ասում, որը, սակայն, հիշատակված չէ Ավետարաններում, այլ մի առիթով հիշում է Պողոս առաքյալը: Թերևս սրա նման շատ պատգամներ, ճշմարտություններ կային, որոնք ասվել են քարոզի ընթացքում, սակայն, դժբախտաբար, գրի չեն առնվել: Բարեբախտաբար, այս երանությունը Պողոսի կողմից հիշատակվելով վավերական է դարձել, այլապես հետագայում «ավանդություն է» ասելով մի շարք եկեղեցիներ պիտի չընդունեին:

Ահա հենց այս ավանդությունն է, որ մեզ սովորեցնում է Աստվածամոր վերափոխման ճշմարտությունը: Եթե Աստվածամայրը երկինք վերափոխված չլիներ, ինչո՞ւ պիտի առաքյալները սուտ և մանավանդ «հակասուրբգրային» պատմություններ տարածեին ժողովրդի մեջ, որն էլ իր հերթին այս ավանդությունը փոխանցելու էր հաջորդ սերնդին: Այստեղ, կարծես թե համապատասխանում է Ս. Պողոս առաքյալի բերած փաստին՝ Քրիստոսի հարությունը վկայելու մասին (Ա Կորնթացիս 15.15), որը ճիշտ համընկնում է մեր առաջ քաշած գաղափարին: Ինչպես արդեն ասացի, վերափոխման այս վարդապետությունը «հակասուրբգրային» է համարվում մի շարք եկեղեցիների կողմից: Սակայն ինչպե՞ս կարող է այն հակասուրբգրային լինել, եթե Հին Ուխտում արդեն կան երեք անձինք, որոնք երկինք են փոխադրվել: Այսպես.

«Հավատով Ենովքը երկրից փոխադրվեց, որպեսզի մահ չտեսնի և ոչ մի տեղ չգտնվեց, քանի որ Աստված փոխադրեց նրան, որովհետև նրա փոխադրվելուց առաջ վկայվեց, թե Աստծուն հաճելի էր» (Եբրայեցիս 11.5): Հապա Եղիա մարգարեի հրեղեն կառքերով երկինք փոխադրվելը.

«Մինչ նրանք քայլում էին, հրեղեն մի կառք ու հրեղեն երիվարներ երևացին, նրանց միմյանցից բաժանեցին, և Եղիան մորիկով երկինք բարձրացավ: Եղիսեն նայեց ու աղաղակեց. «Հա՛յր իմ, Հա՛յր իմ, Խորայելի կառքը և նրա հեծյալը» (Դ Թագավորաց 2.11-12):

Վերջապես՝ Սովսես մարգարեի մահը և երկինք փոխադրվելը.

«Մինչև այսօր ոչ մի մարդ չգտավ Սովսեսի գերեզմանը» (Բ Օրինաց 34.5):

(Մեր հոգևոր գրականության մեջ այս հարցը այլ մեկնություն ևս ունի: Աստված գաղտնի պահեց գերեզմանը, որպեսզի հրեաները կուռք չդարձնեն, իսկ այլազգիները՝ չանարգեն: Թաղման վայրը՝ Փեգովրանը, կուռքերի վայր էր, և դևերը թույլ չէին տալիս թաղել մարմինը, մինչև որ Միքայել հրեշտակապետը սաստեց նրանց- Գ. Տաթևացի «Գիրք հարցմանց», էջ 409:

Ըստ Կյուրեղ Երուսաղեմցու, երբ Հիսուսն իջավ դժոխք, Նրան ընդառաջ գնացին նահապետներն ու մարգարեները, որոնց մեջ էր նաև Սովսեսը- «Կոչումն ընծայութեան», էջ 287, Ծ.Խ.):

Հուդա առաքյալն ամփոփում է.

«Միքայել հրեշտակապետը, երբ Սատանայի հետ վիճում էր Սովսեսի մարմնի համար...» (Հուդա 9):

Այս տան միջոցով ի հայտ է գալիս դարերի ընթացքում պահպանված մի ավանդություն ևս: Սովսեսի կյանքի ու գործունեության մասին պատմող Հնգամատյանի չորս գրքերում (Ելից, Ղևտացվոց, Թվոց, Բ Օրինաց), որոնք հանգամանորեն և մանրամասն են գրված, սույն տունը չկա: Ուրեմն Հուդա առաքյալն այս իրողությունը քաղել է դարերի խորքից հասած բանավոր կամ գրավոր մեկ այլ ավանդությունից:

Վերոհիշյալ օրինակներով տեսնում ենք, որ երկինք փոխադրվելու համար պարտադիր չէր Քրիստոսի մայրը լինել: Ինչպես Ենովքի մասին ենք կարդում. «Աստծուն հաճելի էր», «Աստծո հետ քայլեց». այսքանը միայն: Իսկ Աստվածամոր համար Աստծո մայրը լինելը բավական է: Կարծում են, որ այլևս հարկ չկա որևէ բան ավելացնել: Եվ վերջապես՝

«Արդարև, ո՞վ ինացավ Տիրոջ մտքերը, կամ ո՞վ Նրան խորհրդակից եղավ» (Հռոմեացիս 11.34):

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԻՍՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՐԾԵՑՅԱԼ ԵՂՔԱՅՐՆԵՐԸ

ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԻ ՄՇՏՆՁԵՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջացնելու համար Աստվածամոր մասին մեր ասելիքը, այստեղ պետք է խոսենք նաև Հիսուսի կարծեցյալ «եղբայրների» մասին: Մի հարց է սա, որը միշտ էլ թյուրըմբռնումների և վիճաբանությունների տեղիք է տվել և հիմք հանդիսացել ոմանց համար՝ մերժելու Աստվածամոր հետծննդյան կուսությունը, այսինքն՝ մշտնջենական կուսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԻՍՈՒՄԻ ԿԱՐԾԵՑՅԱԼ ԵՂՔԱՅՐՆԵՐԸ

Ավետարաններում, նաև Գործքում (1.14) և Պողոս առաքյալի մի շարք ուղերձներում (Ա Կորնթացիս 9.5, Գաղատացիս 1.19) Հիսուսի զարմիկները կամ Նրա մոտիկ ազգականները հիշատակվում են իբրև Տյառնեղբայրներ՝ Տիրոջ եղբայրներ:

Պետք է ասել, որ հրեաների մեջ ազգականներին եղբայր կոչելու այս սովորությունը շատ հնուց է գալիս, որովհետև եբրայերենը չունի զարմիկ բառը:

(Նույնն է վիճակը նաև ռուսների և ռուսախոս հայերի մոտ: Սա հատուկ է ոչ միայն սեմական լեզուներին. չինարենը, օրինակ, որը շատ հարուստ է ազգակցություն ցույց տվող բառերով, նույնպես չունի զարմիկ բառը: Ծ.Խ.)

Այս բառը չկա նաև արամերենում, որը Քրիստոսի ժամանակ խոսակցական լեզու էր: Այս պատճառով Հին Կտակարանում մոտ ազգականները որպես եղբայր են հիշատակվում: Աբրահամն իր եղբոր որդուն՝ Ղովտին, եղբայր է անվանում (Ծննդոց 12.5).

«Աբրահամն ասաց Ղովտին. «Աղաչում եմ քեզ, իմ ու քո միջև, իմ ու քո հովիվների միջև վիճաբանություն թող չլինի, քանի որ մենք եղբայրներ ենք» (Ծննդոց 13.8),

«Աբրահամն իր եղբոր՝ Ղովտի գերեվարվելը լսեց» (Ծննդոց 14.14),

«Եվ Աբրահամը ողջ բարիքը հետ բերեց և իր եղբորը՝ Ղովտին էլ և նրա ունեցվածքն էլ» (Ծննդոց 14.16):

Հորեղբոր որդիները՝ զարմիկները, նույնպես եղբայր էին կոչվում: Այսպես, երբ Տիրոջ հրեշտակը սպանեց Ահարոնի որդիներին՝ Նադաբին և Աբիուղին, խորանի առջև օտար կրակ մատուցելու համար,

«Մովսեսը կանչեց Ահարոնի հորեղբոր՝ Ոզիելի որդիներին՝ Միսայելին և Եղիսափանին, և ասաց նրանց. «Մոտեցե՛ք, ձեր եղբայրներին սրբարանի առջևից ու բանակից դուրս տարե՛ք» (Ղևտացվոց 10.4):

Սամսոնի պատմությունն ավելի է հստակում ազգականներին եղբայր կոչելու հարցը: Սամսոնի մայրն ամուլ էր՝ զավակ չէր ծնում: Եվ Տիրոջ հրեշտակը երևաց այս կնոջն ու ավետիս տվեց, թե պիտի հղիանա ու որդի ծնի, և այդ տղան իր մոր արգանդից Աստծո ուխտավորը պիտի լինի (Դատավորաց 13.3, 5): Սամսոնն իր ծնողների միամորիկ որդին էր, և սրանք այս ուխտի զավակից զատ ուրիշ երեխա չունեցան: Բայց նրա մերձավոր ազգականներն իբրև եղբայրներ են հիշվում այստեղ: Այսպես, երբ Սամսոնն ուզում էր փղշտացի կնոջ հետ ամուսնանալ, հայրն ու մայրն ասացին. **«Մի՞թե քո եղբայրների աղջիկների մեջ և իմ ողջ ժողովրդի մեջ մի կին չկա»** (Դատավորաց 14.3):

Նույնպես էլ Սամսոնի թաղման առիթով նրա ազգականներն իբրև եղբայրներ են հիշատակվում.

«Եվ նրա եղբայրները և հոր ամբողջ տոհմը իջան Գազա և նրան վերցրին ու տարան իր հոր՝ Մանուելի գերեզմանում թաղեցին» (Դատավորաց 16.31):

Գերդաստանի բոլոր անդամները նույնպես եղբայրներ են կոչվում.

«Դավիթը հավաքեց Ահարոնի որդիներին և ղևտացիներին. Կահաթի որդիներից Ուրիել իշխանին և նրա եղբայրներից՝ 120 հոգի, Մերարիի որդիներից Ասայիա իշխանին ու նրա եղբայրներին՝ 220 հոգի» (Ա Մնացորդաց 15.4-10),

«Ղևտացիները առանձնացրին Յովելի որդի Եմանին և նրա եղբայրներից Բարաթիայի որդի Ասափին...» և այլն (Ա Մնացորդաց 15.17):

Այս օրինակներին ծանոթանալուց հետո մեզ համար ավելի պարզ ու հասկանալի պիտի լինի, թե ինչ իմաստով են եղբայր ասվում մեր Տիրոջ զարմիկներն ու ազգականները:

Երբ Յիսուսը հայրենի քաղաք՝ Նազարեթ եկավ Իր աշակերտների հետ, տեղի ժողովուրդը զարմանում էր Յիսուսի իմաստության և Նրա կատարած հրաշքների վրա և ասում.

«Որտեղի՞ց Սրան այս իմաստությունը և զորությունը, մի՞թե Սա մեր ճանաչած հյուսնը չէ, Մարիամի որդին, Յակոբոսի ու Յովսեփի և Յուդայի ու Սիմոնի եղբայրը. և Սրա քույ-

րերն այստեղ՝ մեզ մոտ չե՞ն» (Մարկոս 6.3, Մատթեոս 13.55):

Այստեղ առաջին բանը, որ պետք է նկատի ունենալ, այն է, որ միայն Յիսուսն է հիշատակված իբրև Մարիամի որդի, իսկ մյուսները՝ Յիսուսի եղբայրներ: Եվ մենք ոչ մի տեղ չենք հանդիպում, որ նրանք էլ իբրև Մարիամի որդիներ հիշված լինեն: Տրամաբանական և օրինավոր կլինեք սրանց էլ «Մարիամի որդիներ» կոչել, եթե նրանք իսկապես Մարիամի որդիները լինեին Յովսեփից, ինչպես պնդում են ոմանք: Մինչդեռ Մարիամի որդի միմիայն Յիսուսի վերաբերյալ է ասվում:

Միշտ այսպես է հիշատակվում.

«Յիսուսի մայրը՝ Մարիամը և Նրա եղբայրները»

(Յովհաննես 2.12, Գործք 1.14):

Յետաքրքրական է, որ նույնիսկ Ղուրանում այդպես է. «Յիսուսը՝ Մարիամի Որդին» (Սուրահ ԺԾ 35):

Եվ վերջապես, երբ Յիսուսը խաչի վրա էր, Իր անմխիթար ու մենակ մնացած մորն ինչո՞ւ պիտի Յովհաննեսի հոգածությանը հանձնեք, եթե Մարիամը ուրիշ չորս հարազատ որդիներ և, թերևս, նույնքան էլ դուստրեր ունենար: Ո՞ր մայրն իր հարազատ զավակին ուրիշ զավակի հետ կփոխի, եթե նույնիսկ մյուսը ազգականի զավակ էլ լինի:

Անլուրջ է այն պատճառաբանությունը, թե Յիսուսն իր մորը սիրելի աշակերտ Յովհաննեսին հանձնեց, որովհետև Իր եղբայրներն Իրեն չէին հավատում (Յովհաննես 7.5): Ասացի անլուրջ է, որովհետև քառասուն օր հետո՝ Յամբարձման օրը, չհավատացող եղբայրներին Վերնատանը հավաքված կտեսնենք.

«Սրանք բոլորը (Յիսուսի աշակերտները) միաբանված՝ հարատև աղոթքի մեջ էին կանանց և Յիսուսի մոր՝ Մարիամի ու Նրա եղբայրների հետ միասին» (Գործք 1.14):

Գոնե այստեղ պետք է հիշատակվեր Մարիամն իր որդիների հետ, եթե նրանք Մարիամի հարազատ զավակներն էին:

Յիսուսն, անշուշտ, գիտեր, որ Իր անվանյալ եղբայրները Յարությունից հետո պետք է հավատային Իրեն (Ա Կորնթացիս 15.7):

Այստեղ պետք է ասեն, որ Հիսուսն իր մորը Հովհաննեսին հանձնեց նաև այն պատճառով, որ Սուրբ Կույս Մարիամը ու Հովհաննեսի մայր Սողոմեն ազգականներ էին: Դրա համար է Հովհաննեսն իր մոր անունը հիշատակելու փոխարեն գրում՝ Մարիամի քույրը:

«Եվ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին Նրա մայրն ու Նրա մոր քույրը (Սողոմեն), Մարիամը՝ Կղեովպասի կինը, և Մարիամ Մագդաղենացին» (Հովհաննես 19.25):

Շատերը սխալ հասկանալով կարծել են, թե Հովհաննես ավետարանիչը «մոր քույրը» ասելով ակնարկում է Կղեովպասի կին Մարիամին, ոչ թե իր մորը՝ Սողոմենին: Սա Հովհաննեսի ոճն է, նա միշտ խուսափում է նաև իր անունը հիշատակելուց և սիրում է գրել:

«Այն աշակերտը, որին Հիսուսը սիրում էր» (Հովհաննես 13.23, 25, 20.2, 21.20):

Այստեղ պարզապես ստորակետի խնդիր է. երբ «մոր քույրը» բառից հետո է դրվում, ճշգրտվում է իմաստը, և միաժամանակ խաչի մոտ երեք հոգու փոխարեն չորսն են կանգնած լինում:

Սակայն մյուս Ավետարաններում կարդում ենք, որ «մոր քույր» հիշատակվածը Սողոմեն էր: Մատթեոսն ասում է.

«Այնտեղ էին Մարիամ Մագդաղենացին և Հակոբոսի ու Հովսեփի մայրը՝ Մարիամը և Ջեբեդեոսի որդիների մայրը» (Մատթեոս 27.56):

Իսկ Մարկոսը գրում է.

«Մարիամ Մագդաղենացին և փոքրիկ Հակոբոսի ու Հովսեփի մայր Մարիամը և Սողոմեն» (Մարկոս 15.40):

Պարզ երևում է, որ Սուրբ Կույս Մարիամն ու Սողոմեն ոչ թե քույրեր էին, այլ՝ ազգականներ: Ահա ևս մի դրվագ, որտեղ մերձավոր ազգականներն իբրև քույրեր են հիշվում:

Ովքե՞ր էին, սակայն, Հիսուսի կոչեցյալ եղբայրները: Հիսուսի եղբայրների թվում հիշատակվում են Հակոբոսը, Հովսեփը, Հուդան և Սիմոնը: Հակոբոսի և Հովսեփի մայրն է Մարիամը (Մատթեոս 27.56, Մարկոս 15.40): Այս Մարիամը երբեմն հիշատակվում է նաև իր ամուսնու՝ Կղեովպասի անունով (Հովհաննես 19.25): Ուրեմն այստեղ էլ Հին Ուխտի օրի-

նակով (Ա Մնացորդաց 15.17) կարող ենք ասել. Հիսուսի եղբայրներից երկուսը Կղեովպասի և Մարիամի որդիներ Հակոբոսն ու Հովսեփն էին: Իսկ մյուս երկուսը՝ Հուդան ու Սիմոնը, նույնպես կարող էին լինել Կղեովպասի և Մարիամի որդիները, կամ էլ Հիսուսի մոտ ազգականներից մեկ ուրիշի որդիները, քանի որ Ավետարանը մեզ ասում է, թե Հիսուսի ծնողներն ուրիշ ազգականներ էլ ունեին (Ղուկաս 2.44): Կարծիք կա, թե Կղեովպասը Հովսեփի եղբայրն էր կամ էլ մեկ այլ մոտ ազգականը: Այս Կղեովպասը նաև Էմմավուսի երկու ճամփորդներից մեկն էր (Ղուկաս 24.18):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՆՉՈ՞Ւ ԶԵՆ ՀԻՇԱՏԱԿԿԵԼ ՀԻՍՈՒՄԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ղուկասի Ավետարանում կարդում ենք, որ Հիսուսի ծնողներն ամեն տարի, Ջատկի տոնին, Երուսաղեմ էին գնում (Ղուկաս 2.41): Եթե Մարիամն ու Հովսեփն ուրիշ երեխաներ ունենային, նրանք ևս հիշատակված կլինեին, մանավանդ այն դեպքի առնչությամբ, երբ Հիսուսին կորցրել էին, և Նա երեք օր տաճարում էր մնացել: Այս երեք օրվա փնտրտուքի ընթացքում հիշատակվում են նրա ազգականները և ծանոթները, բայց ոչ՝ եղբայրները (Ղուկաս 2.44): Բնականաբար, եղբայրներն էլ պետք է գնացած լինեին տաճար և, անշուշտ, կհիշատակվեին (Բ Օրինաց 16.16, Ելից 23.17):

ՄԱՐԻԱՄՆ ԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴՈՒՆ ԾՆԵՑ

Գրված է նաև, որ Հիսուսը Մարիամի անդրանիկ որդին էր. **«Իր անդրանիկ Որդուն ծնեց»** (Մատթեոս 1.25):

Այստեղից եզրակացնում են, թե Մարիամը պետք է որ ուրիշ որդիներ էլ ունենար:

Նախ՝ անդրանիկ բառը գործածված է ցույց տալու համար, որ քառասուն օր հետո, ըստ մովսիսական օրենքի, երեխան, իբրև անդրանիկ որդի, ընծայվելու է տաճարին (Ելից 13.2, Ղուկաս 2.22-38):

Նախքան Քրիստոսը 5 թ. Եգիպտոսի հրեական գերեզմանոցում մի արձանագրություն են գտել անդրանիկ երեխայի հիշատակությամբ, որի մայրը, սակայն, այս երեխայի ծննդաբերության ժամանակ մահացել էր: Այսուհանդերձ հիշվում է որպես իր մոր անդրանիկ որդի: (J.B.Frey, Dans Biblia, t XI, [1930] p.373):

Երկրորդ՝ անդրանիկ զավակը Տիրոջ ուխտավոր՝ նվիրյալ անձ է դառնում: Երբ ավետարանիչն օգտագործում է անդրանիկ բառը, մեզ սկզբից ևեթ հասկացնում է, որ, համաձայն մովսիսական օրենքի էլ, Հիսուսն արդեն այդ նվիրյալ անձն էր: Քանի որ Մովսեսը հրամայել է.

«Ամեն մոր արգանդը բացող Իմն (Տիրոջն) է» (Ելից 34.19):

«Սրբի՛ր Ինձ համար Իսրայելի որդիներից յուրաքանչյուր արգանդ բացող անդրանիկին» (Ելից 13.2):

Մոր արգանդը բացողը, անդրանիկը լինելով, Տիրոջ ուխտավորն էր համարվում: Նա կարող էր իր մոր միակ զավակը լինել, սակայն չէր դադարում, անշուշտ, անդրանիկը համարվելուց, քանի որ իր մոր արգանդ բացողն էր ու նաև՝ Տիրոջ ուխտյալը: Այս է, անշուշտ, մեզ տեղեկացնում ավետարանիչը:

Մատթեոս ավետարանիչն «Անդրանիկ Որդի» ասելուց հետո չի խոսում այս ընծայման մասին, սակայն Եգիպտոսից վերադառնալու առթիվ գրում է.

«Եկան, Նազարեթ քաղաքում բնակվեցին, որպեսզի կատարվի մարգարեների խոսքը, թե՛ Նազովրեցի պիտի կոչվի» (2.23):

Այս տունը Հին Կտակարանում չկա, սակայն սրանով մեզ հաղորդվում է ամբողջ Օրենքի և մարգարեների ոգին: Այսպես՝ Նազարեթ անունը ծագել է Նազեր բառից, որ եբրայերեն զատել, բաժանել է նշանակում: Ուստի «Նազովրեցի» կոչվելով՝ Հիսուսը, համաձայն մովսիսական օրենքի, պետք է նվիրյալ, ուխտյալ անձ լիներ:

ԵՎ ՀՈՎՍԵՓԸ ՆՐԱՆ ՉՄՈՏԵՑԱՎ, ՄԻՆՉԵՎ ՄԱՐԻԱՄՆ ԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴՈՒՆ ԾՆԵՑ

Մինչև այսօր էլ Աստվածամոր մշտնջենական կուսությունը մերժողներն իբրև փաստարկ հետևյալ տունն են բերում.

«Եվ Հովսեփը նրան չմոտեցավ, մինչև Մարիամը իր անդրանիկ որդուն ծնեց» (Մատթեոս 1.25):

Սակայն այս նախադասությունն անպայման չի նշանակում, թե Հիսուսի ծնունդից հետո Հովսեփն ամուսնական կյանքով է ապրել Մարիամի հետ, ինչպես պնդում են ոմանք: Այստեղ «մինչև» նախադրությունը գործածվել է նրա համար միայն, որ ավելի շեշտվի Քրիստոսի կուսական ծնունդը:

Այս բառը նույն իմաստով գործածված ենք տեսնում մի այլ տեղում.

«Եվ մինչև այսօր Մովսեսի գերեզմանի տեղը մարդ չիմացավ» (Բ Օրինաց 34.6):

Ո՞վ կարող է ասել, թե հետո որևէ մարդ իմացավ նրա գերեզմանի տեղը: Ո՛չ ոք:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հավատում է, որ Մարիամը կույս էր ոչ միայն իր անդրանիկ Որդուն ունենալիս, այլև դրանից հետո էլ կույս մնաց:

Ունենք նաև մեկ ուրիշ փաստացի օրինակ, երբ Սուրբ

Կույսը պատասխանում է հրեշտակին.

«Քանի որ ես տղամարդ չգիտեմ» (Ղուկաս 1.34):

Մարիամի մշտնջենական կուսության վարդապետությունը հիմնվում է գլխավորապես այս տան վրա: Եթե Մարիամն ուխտած չլիներ միշտ կույս մնալ և իր նշանածի հավանությունն ստացած չլիներ, նման բան չէր հավաստի հրեշտակին:

Կուսության վարդապետության այս հարցն ավարտում են Եզեկիելի մարգարեությամբ. մի մարգարե, որ դարեր առաջ ներբողել է Աստվածամոր մշտնջենական կուսությունը.

«Այս դուռը փակ պիտի մնա և չպիտի բացվի, և այնտեղից մարդ չպիտի մտնի. քանզի այդտեղից Իսրայելի Տեր Աստվածը մտավ, այդ պատճառով պիտի փակ մնա: Այն պիտի լինի Իշխանի համար, այնտեղ միայն Իշխանը պիտի նստի Տիրոջ առջև» (Եզեկիել 44.2-3):

Գրիգոր Տաթևացին էլ այս տունն է վկայակոչում՝ որպես փաստ Մարիամի մշտնջենական կուսության, թե՛ Եզեկիել մարգարեն գրել է, որ Սուրբ Կույսի արգանդը փակ պիտի մնար, որովհետև այնտեղ Խաղաղության Իշխանն էր մտել միայն:

ՎԱՉԵ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ

ՎԱՐԴԱՊԵՏ

ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆ

Հարություն Իգնատիոսյանը ծնվել է 1939 թ. հունվարի 20-ին, Բեյրութում: 1954 թ. ընդունվում է Կիլիկիո կաթողիկոսարանի դպրեվանքը՝ Անթիլիաս, Լիբանան:

Չորս տարի ուսանելուց հետո, 1958 թ. մեկնում է սովորելու Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց պատրիարքարանի Ընծայարանի բաժնում: 1961 թ. հոկտեմբերի 1-ին Եղիշե պատրիարքի կողմից ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ ստանալով Վաչե Աբեղա անունը: 1966 թ. մեկնում է Փարիզ՝ խորացնելու իր գիտելիքներն աստվածաբանության և հայրաբանության մեջ:

Ընդունվում է կաթոլիկական ինստիտուտ, ուր ուսանում է մինչև 1969 թ. և ստանում ավարտական դիպլոմ: Հովվական պաշտոնի բերումով ուղարկվում է Մարսել քաղաքի Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս հայաշատ եկեղեցին: 1977 թ. Երուսաղեմի պատրիարքի ձեռքով ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան:

Հեղինակ է բազում ջատագովական և աստվածաբանական գրքերի, որոնց թվում են.

«Բարեխոսություն Սրբոցը», «Մեր Սուրբ Պատարագը», «Հայկական մանրանկարչությունը և Թորոս Ռուլինը»: Այս գրքերից շատերը թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով:

Եկեղեցասիրաց Եղբայրակցության ջանքերով Հայրենիքում բազմիցս տպագրվել են «Աստվածամայրը», «Բարեխոսություն Սրբոցը», «Մեր Սուրբ Պատարագը», որոնք լուրջ ներդրում են մեր ջատագովական գրականության մեջ: